ԳԼՈՒԽ Խ.

Գալուստ նոր Դատաւորի ։ Վէճ Լատինաց 'ի Ս. Յարութիւն ։ Երկիցս ժողով 'ի դատարանի ։ Վրդովումն Լատինաց ։ Փոխանակ Բդեշխին Իբրահիմ աղա ։ Բռնութիւն Լատինաց ։

Եհաս նոր Դատաւորն Երուսաղէմի Միւփթի Զատէ Մուստաֆա Բագի էտտին Էֆէնտի 'ի Յոպպէ, ծանօթ Բիշմիշեան Միքայել Ամիրայի, որոյ պատուիրեալ էր սիրով վարիլ ընդ Հայս ։ Սա 'ի սկզբան ոչ կամեցաւ գնալ՝ այլ 'ի տեղի իւր փոխանորդ կարգել խնդրէր զՆուրի Էֆէնտի, և յետոյ գրեթէ բռնի առաքեցին հրամանաւ Արքայի ըստ կարգի իշխանութեան իւրոյ ։

Քաղաքապետն կոչեալ զորդի Դպրապետի դատարանին, որ պատրաստ էր գնալ 'ի Յոպպէ յընդունելութիւն Դատաւորին, բանսարկութեամբ պատուիրէ նմա ասել զԴատաւորն՝ հաւատարիմ մնալ Բդեշխին, եւ համախոհ իւր. և կեալ անդորրութեամբ և մի խոտորիլ զհետ շաւղաց Մուսայ Դատաւորին. պահեալ նմա առաջին որս ըզխնդիր Բեթղեհէմի, որ 'ի մէջ Հայոց եւ Լատինաց, այլովքն հանդերձ ։

Թէպէտ գրեալ էր առ նա, այլ պատուիրէր բերանացի եւս պատմել նմա ։ Իսկ այրն որ ուսաւ զգաղտնիս նորա, եկեալ առանձին 'ի վանս Հայոց պատմեաց Ծերունեաց զբանս նորա եւ լուեալ զարժանաւոր պատասխանիս խաղաղութեամբ մեկնեցաւ անտի ։

Եւ հասեալ 'ի Յոպպէ՝ գրեաց առ Թէոդորոս Պատրիարք թէ նախ քան զխօսիլն իւր, Դատաւորն զգուշացուցեալ է. զինքն չխօսիլ ինչ վասն խնդրոյ Հայոց. զի լուեալ էր զամենայն ինչ 'ի Նուրի Էֆէնտեայ, և թէ Արքայն և մեծամեծք Դրան խնամով վարին ընդ Հայս ։ Ապա ելեալ անտի Դատաւորին եմուտ յԵրուսաղէմ հանդիսիւ ըստ սովորութեան ժամանակին ('ի 22 Յուլիսի) ։

Զեւ եւս մաքրեալ զխնդիրն Բեթղեհէմի՝ Լատինք յարուցին զայլ իմն վէճ տարօրինակ 'ի Ս. Յարութիւն. զի